# ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԿԱՊԱՆՈՒՄ

Ս/թ  փետրվարի 8-ին (հունվարի 29-ի փոխարեն) ՀՀ Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը  մարզկենտրոնում կատարել է քաղաքացիների  ընդունելություն:

Ընդունելությանը ներկայացել է 96 քաղաքացի:

Դրամական օգնություն ստանալու խնդրանքով  դիմել էր յոթանասունմեկ, աշխատանքի տեղավորման միջնորդության համար՝ քսաներկու, գրքի տպագրման, ճանապարհի անմխիթար վիճակի և խմելու ջրի, գազի հետ կապված խնդրանքով՝ մեկական  քաղաքացի:

Դրամական օգնության դիմումներից  վաթսունյոթին տրվել է դրական լուծում, չորս դիմում մերժվել է:

Ընթացք է տրվել աշխատանքի տեղավորման մասին մեկ դիմումի, քսանմեկ դիմումներ վերցվել են հաշվառման և ուսումնասիրվում են դրանց լուծման հնարավորությունները:

Աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումներում մարզպետի հանձնարարությամբ ուսումնասիրվում են գրքի տպագրության, ճանապարհի անմխիթար վիճակի, խմելու ջրի հետ կապված խնդիրների  մասին դիմումները:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմ